Հարգելի փաստաբաններ,

Սույնով Դուք ծանուցվում եք այն մասին, որ **2022 թվականի դեկտեմբերի 24-ին, ժամը 09^{00}-ից մինչև 18^{00}-ն** ՀՀ փաստաբանների պալատի՝ Երևան քաղաքի Ջաքյան 7-2 հասցեում գտնվող վարչական շենքի 2-րդ հարկի սրահում, հեռակա կարգով (առանց ընդհանուր ժողովի գումարման) տեղի է ունենալու Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողով՝ հետևյալ օրակարգային հարցերով.

1) ՀՀ փաստաբանական պալատի կարգապահական հանձնաժողովի անդամների ընտրության մասին.

2) Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու (նոր խմբագրությամբ շարադրելու) մասին.

3) Փաստաբանի վարքագծի կանոնագրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

Օրակարգային հարցերով **քվեարկությունը (ընտրությունը)** սկսվում է **2022 թվականի դեկտեմբերի 24-ին, ժամը 09^{00}-ից և ավարտվում է նույն օրը՝ ժամը 18^{00}-ին**:

1. Կարգապահական հանձնաժողովի անդամների **թեկնածուների առաջադրումը (ինքնաառաջադրումը)** սկսվում է **2022 թվականի նոյեմբերի 26-ից (ներառյալ) և ավարտվում է 2022 թվականի դեկտեմբերի 1-ին (ներառյալ)**:
2. Կարգապահական հանձնաժողովի անդամների **թեկնածուների քարոզչությունը** սկսվում է **2022 թվականի դեկտեմբերի 2-ից (ներառյալ) և ավարտվում է 2022 թվականի դեկտեմբերի 22-ին, ժամը 18^{00}-ին**:
3. **2022 թվականի դեկտեմբերի 23-ը համարվում է լռության օր:**
4. Յուրաքանչյուր փաստաբան **քվեարկությանը պետք է մասնակցի անձամբ:**
5. Քվեարկության օրը պետք է ներկայանալ **անձը հաստատող փաստաթղթով կամ փաստաբանի վկայականով:**
6. Քվեարկության գաղտնիությունը քվեարկող փաստաբանի համար ոչ միայն իրավունք է, այլև՝ պարտականություն:

ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու (նոր խմբագրությամբ շարադրելու) մասին և Փաստաբանի վարքագծի կանոնագրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին որոշումների նախագծերը ՀՀ փաստաբանների պալատի կայքէջում հրապարակվելու է ընդհանուր ժողովի հրավիրված օրվանից ոչ ուշ քան առնվազն 14 օր առաջ:

Եթե կունենաք կանոնադրության մեջ կամ Փաստաբանի վարքագծի կանոնագրքում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու վերաբերյալ առաջարկներ, ապա կարող եք սույն ծանուցումը հրապարակվելու օրվանից տասնօրյա ժամկետում գրավոր ներկայացնել ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմ:

Ընդհանուր ժողովի հետ կապված անհրաժեշտ այլ տեղեկություններին կարող եք ծանոթանալ ՀՀ փաստաբանների պալատի www.advocates.am կայքէջից:

Հայաստանի Հանրապետության

փաստաբանների պալատի

աշխատակազմ

Բեռնել ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 22 նոյեմբերի 2022թ. թիվ 19/4-Լ որոշումը